

ԵՄ քաղաքականությունը Հարավային Կովկասում. տարբերակման բարդ ուղին

ՆՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան

Հոդվածում ուսումնասիրվում են Հարավային Կովկասում ԵՄ քաղաքա-կանության զարգացման փուլերը: Գնահատելով Եվրոպական միության (ԵՄ) ու Հարավային Կովկասի համագործակցության դինամիկան՝ ներկայացվում է, թե որքանով են ԵՄ՝ հարևանության ծրագրերն արձագանքում Հարավային Կովկասի պետությունների՝ ԵՄ-ին առնչվող տարբեր դիրքորոշումներին, հետաքրքրություններին և հավակնություններին: Արձանագրվում է, որ թեև ԵՄ քաղաքականությունը Հարավային Կովկասում կրել է լուրջ փոփոխություններ, սակայն դրա արդյունավետությունը մնում է ոչ բարձր: Քննարկվում են Հարավային Կովկասի տարածաշրջանում ԵՄ հարևանության ծրագրերի ձախողման տարբեր տեսակետներներ: Հետազոտությունը ցույց է տալիս դիվերսիֆիկացիայի կարևորությունը՝ արևելյան ուղղությամբ ԵՄ քաղաքականության արդյունավետության մեծացման տեսանկյունից: Առաջարկվում է Հարավային Կովկասում ԵՄ քաղաքականության զարգացումը բաժանել երեք փուլերի:

Բանալի բառեր

Եվրոպական միություն, Հարավային Կովկաս, Եվրոպական հարևանության քաղաքականություն, Արևելյան գործընկերություն, առանձնահատկություններ, միանման մոտեցում, տարբերակում

Ներածություն

1991թ. Խորհրդային միության փլուզումը պատճառ դարձան տարածաշրջանում նոր աշխարհաքաղաքական դերակատարների ի հայտ գալուն, ինչպես նաև հարավկովկասյան պետությունների և տարածաշրջանային ու արտատարածաշրջանային դերակատարների միջև նոր, անկախ հարաբերությունների հաստատմանը:

Փոխադարձ ճանաչողական սկզբնական փուլից հետո ԵՄ-ի հետաքրքրությունները Հարավային Կովկասի նկատմամբ զգալիորեն մեծացան և 2000-ական թվականներից սկսած տարածաշրջանը կարևոր տեղ զբաղեցրեց ԵՄ-ի քաղաքական օրակարգում: Հարավային Կովկասի համար համապարփակ ռազմավարության մշակումը, տարածաշրջանում ԵՄ Հատուկ ներկայացուցչի նշանակումը, Գործընկերության և համագործակցության համաձայնագրերի (ԳՀՀ) կնքումը վկայեցին, որ ԵՄ-ը հետաքրքրված է տարածաշրջանի ճանաչված պետությունների հետ հարաբերությունների զարգացմամբ: ԳՀՀ

համաձայնագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միմյանցից շատ չէին տարբերվում¹՝ ԵՄ-ը նույն կերպ էր արձագանքում տարբեր ազգային նկրտումներին և մտահոգություններին, քանզի Հարավային Կովկասի պետությունների հետ սկզբնական հարաբերությունները, ձևավորված ԳՀՀ-ի հիման վրա, բոլոր հետխորհրդային պետությունների նկատմամբ ԵՄ-ի ընդհանուր մոտեցման մաս էին կազմում: Ինչպես նշում է Լինչը, «ԳՀՀ-ում ամրագրված նախնական մոտեցման շրջանակներում, որը համաձայնեցվել էր բոլոր նախկին խորհրդային հանրապետությունների հետ, տարածաշրջանը դիտարկվում էր որպես «նախկին Խորհրդային միություն»: ԱՊՀ-ին տրամադրվող՝ Հանձնաժողովի տեխնիկական աջակցության (ՏԱՄԻՍ) ծրագիրը մեծապես արտացոլեց այդ տեսլականը: ԵՄ-ի աջակցության նպատակները սահմանվել էին ամբողջ տարածաշրջանի համար՝ տարածք, որն ընդգրկում է տասներկու պետություն՝ տարբեր աշխարհագրությամբ, քաղաքական և տնտեսական համակարգերով ու հեռանկարներով: ԵՄ-ի մտածողության մեջ նախկին Խորհրդային միության վերաբերյալ տարբերակումը ընթանում է դանդաղ և Հարավային Կովկասը հայտնվել է ցուցակի վերջում»²: Այդ ժամանակահատվածում ԳՀՀ-ի շրջանակներից դուրս չձևակերպվեց որևէ ռազմավարական նպատակ կամ ավելի համապատասխան տարածաշրջանային մոտեցում³: Ուստի, հաշվի առնելով շարժառիթի, քաղաքական կամքի և երկու կողմերի պատրաստակամության բացակայությունը, կարելի է փաստել, որ ԳՀՀ-ը հաջողություն չունեցավ:

2000-ականների սկզբին հարավկովկասյան պետությունների ներառումը Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) մեջ, ինչպես նաև տարածաշրջանային պետությունների հետ համագործակցության ամրապնդումը Արևելյան գործընկերության (ԱԳ) ծրագրի, Ասոցացման համաձայնագրի (ԱՀ), Խորը և համապարփակ

¹ **Halbach U.**, The European Union in the South Caucasus: Story of a hesitant approximation in *South Caucasus - 20 Years of Independence*. Friedrich-Ebert-Stiftung. p. 304.

² **Lynch D.**, The EU: Toward A Strategy, *The South Caucasus: A Challenge for the EU* (Edited by D. Lynch), Chaillot Paper no. 65, EU Institute for Security Studies, Paris, 2003, p. 179.

³ **Lynch D.**, Op. cit., pp. 181-182:

ազատ առևտրի գոտու համաձայնագրի (ԽՀԱԱԳՀ) միջոցով փաստեցին տարածաշրջանում ԵՄ-ի քաղաքական ներգրավվածության ընդլայնման մասին: Այդուհանդերձ, չնայած տարածաշրջանում ԵՄ-ի ակտիվ ներկայությանը, համագործակցության մի շարք ոլորտներին, ինչպես նաև համագործակցության գործիքներին և շրջանակներին, ԵՄ քաղաքականության արդյունավետությունը Հարավային Կովկասում շարունակում է մնալ վիճահարույց:

Տարածաշրջանում ԵՄ-ի ձախողումները պայմանավորող գործոնների շարքում են Հարավային Կովկասի ճանաչված պետությունների՝ ԵՄ-ի հետ կապված տարբեր առաջնահերթությունները, որոնք լքողներ են խոչընդոտում են ԵՄ տարածաշրջանային քաղաքականության արդյունավետությանը և առաջընթացին: Չնայած նրան, որ ԵՄ-ը Խորհրդային միության կազմալուծումից ի վեր ներկա է տարածաշրջանում, մինչև վերջերս այն չէր մշակել համապարփակ քաղաքականություն, որը համարժեքորեն կարձագանքեր հարավկովկասյան պետությունների տարբեր ընկալումներին, դիրքորոշումներին և հավակնություններին:

Ըստ որոշ գնահատականների, 1991-2000թթ. ԵՄ-ը հարավկովկասյան ճանաչված պետություններին հատկացրել է ավելի քան 1 միլիարդ եվրո⁴: Այդուհանդերձ, որոշ հեղինակներ պնդում են, որ դա չի տվել սպասված արդյունքներ, ինչը մեծապես պայմանավորված էր եվրոպական հատկացումների սահմանափակ ազդեցությամբ՝ ի տարբերություն ԱՄՆ-ի ֆինանսական օժանդակությանը⁵, Հարավային Կովկասում տարածաշրջանային այլ դերակատարների (մասնավորապես՝ Ռուսաստանի) գերիշխող ներկայությամբ⁶, ֆինանսական միջոցները բաշխելիս «քաղաքական պայմանականության» սկզբունքի չկիրառմամբ⁷, ինչպես նաև ԵՄ-ի որդեգրած միասնական մոտեցման

⁴ **Coppieters B.**, An EU Special Representative to a New Periphery in *The South Caucasus: A Challenge for the EU* (Edited by D. Lynch), Chaillot Paper №. 65, EU Institute for Security Studies, December 2003, p. 159.

⁵ **Lynch D.**, , Op. cit., p. 178.

⁶ **Dekanozishvili M.**, The EU in the South Caucasus: By what means, to what ends?, *Georgian Foundation for Strategic and International Studies*, Occasional Paper №2, January, 2004, pp. 8-10.

⁷ **Lynch D.**, Op. cit., p. 178:

սկզբունքով, որն անտեսում է անցումային փուլում գտնվող պետությունների առանձնահատկությունները, գլխավորապես կենտրոնացած է մարդասիրական ոլորտների վրա:

Հոդվածի գլխավոր նպատակն է ուսումնասիրել ԵՄ-ի տարածաշրջանային քաղաքականությունը տարաբնույթ ազգային շահերի պայմաններում՝ Հարավային Կովկասի դեպքի հիման վրա: Ուսումնասիրությունը նպատակ ունի ցույց տալ, թե ինչպես է ԵՄ քաղաքականությունը Հարավային Կովկասում կապված տարածաշրջանային պետությունների տարբեր ազգային առաջնահերթությունների հետ: Ուսումնասիրելով ԵՄ-Հարավային Կովկաս հարաբերությունների պատմությունը և ներկա զարգացումները՝ հոդվածում կբացահայտվի, թե արդյոք ԵՄ-ը արդյունավետորեն է արձագանքել տարածաշրջանի պետությունների՝ ԵՄ-ին առնչվող տարբեր առաջնահերթություններին, և թե արդյոք ԵՄ Հարևանության քաղաքականությունը Հարավային Կովկասում կարելի է համարել հաջողված ծրագիր: Հոդվածում ներկայացվում է նաև երկրի առանձնահատկությունները հաշվի առնելու կարևորությունը՝ արևելյան ուղղությամբ ԵՄ-ի քաղաքականության արդյունավետության մեծացման տեսանկյունից:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը

ԵՄ-ի դիրքորոշման փոփոխությունը և Հարավային Կովկասի կարևորության գիտակցումը ակնհայտ դարձան այն բանից հետո, երբ տարածաշրջանը ներառվեց ԵՄ-ի Անվտանգության ռազմավարության նախագծում՝ «Ապահով Եվրոպա՝ ավելի լավ աշխարհում» խորագրով: Փաստաթղթում նշվում էր. «Մենք պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնենք Հարավային Կովկասի խնդիրներին, որոնք ժամանակի ընթացքում կդառնան հարևան տարածաշրջանի խնդիրներ»: Ուստի, ԵՄ նպատակների շարքում կարևորվեց նաև Հարավային Կովկասում կանխարգելմանն ուղղված ներգրավվածության համակարգված քաղաքականության զարգացումը⁸:

⁸ A Secure Europe in a better world. European Security Strategy. Brussels, 12 December 2003.

Տարածաշրջանի նկատմամբ ԵՄ-ի ուշադրության մեծացումը պայմանավորված էր մի շարք աշխարհաքաղաքական և ռազմավարական խնդիրներով և, առաջին հերթին, արևելյան ուղղությամբ ԵՄ-ի ընդլայնմամբ, ինչպես նաև տարածաշրջանում սեփական ռազմավարական շահերի հետապնդումով:

2004թ. ԵՄ-ի ընդլայնումն ընդգծեց նոր արևելյան գործընկերների հետ ավելի սերտ փոխգործակցության անհրաժեշտությունը: ԵՄ-ի առաջնային նպատակն էր Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) զարգացումը՝ «հին և նոր հարևանների հետ հարաբերություններում որոշակի կարգուկանոն մտցնելու և ապահովելու, որ նոր ընդլայնված Միությունը շրջապատված լինի «ընկերների շղթայով»»⁹: Սակայն ԵՄ հաղորդագրությունից պարզ դարձավ, որ նոր քաղաքականությունը վերաբերում է Ռուսաստանին, Ուկրաինային, Բելառուսին ու Մոլդովային և դուրս է թողնում Հարավային Կովկասը¹⁰: Ինչպես նշում է Լինչը, ԵՀՔ-ում տարածաշրջանն ընդգրկելու նախնական դժկամության պատճառը ավելի շատ հարևանության քաղաքականության իրականացման քառային և չծրագրված գործընթացի¹¹, քան տարածաշրջանը քաղաքական շրջանակներից դուրս թողնելու միտումնավոր որոշման արդյունք էր: Պատճառների շարքում նշվում է նաև Հարավային Կովկասի ներքին աջակիցների բացակայությունը¹²: Սակայն 2003թ. վրացական Վարդերի հեղափոխությունը, որը նոր ռեֆորմիստական և արևմտամետ արտաքին կողմնորոշման պատճառ դարձավ, բեկումնային եղավ նաև տարածաշրջանի համար: Վեց ամիս անց Եվրոպական հանձնաժողովը, Եվրոպական խորհրդարանի աջակցությամբ, առաջարկեց Հարավային Կովկասը ներառել ԵՀՔ-ում: Հետաքրքրական է, որ դա վերաբերում էր բոլոր երեք հարավկովկասյան պետություններին՝ կրկին ընդգծելով ԵՄ-ի տարածաշրջ-

⁹ **Smith K.**, The outsiders: the European Neighborhood Policy, *International Affairs*, 81, 4, 2005, p. 757.

¹⁰ European Commission. Wider Europe - neighborhood: a new framework for relations with our eastern and southern neighbors, COM (2003) 104 final, 11 March, 2003.

¹¹ **Lynch D.**, Op. cit., p. 172:

¹² **Simão L.**, EU-South Caucasus Relations: Do Good Governance and Security Go Together?, *Political Perspective*, 2011, 5, 2, p. 45.

ջանային մոտեցումը¹³: ԵՀԲ-ը գլխավորապես նախատեսված էր ընդլայնումից հետո առաջ եկած նոր խնդիրները (արևելյան սահմանի վրա անվտանգության ոլորտի նոր խնդիրներ, ԵՄ նոր հարևանությունը կայունացնելու անհրաժեշտություն, ընդլայնված Միության ներքին և արտաքին օրակարգի միջև ներդաշնակեցման հասնելու անհրաժեշտություն) հաղթահարելու համար¹⁴:

Հարևանության քաղաքականությունն, առաջին հերթին, անվտանգ հարևանություն ստեղծելու և նոր բաժանարար գծերի առաջացումը կանխելու փորձ էր¹⁵: ԵՀԲ-ի ռազմավարական փաստաթղթում ԵՄ-ի շուրջ ընդհանուր արժեքների ձևավորումը սահմանվում էր որպես ԵՀԲ-ի գլխավոր նպատակ: Հարևան պետությունների հետ համագործակցության այլ ոլորտների թվում նշվում էին ավելի արդյունավետ քաղաքական երկխոսությունը, տնտեսական և սոցիալական զարգացման քաղաքականությունը, առևտուրն ու ներքին շուկան, արդարադատությունն ու ներքին գործերը, Հարևանության հետ կապերի (էլեկտրաէներգիայի, տրանսպորտի, շրջակա միջավայրի, հետազոտության և նորարարության և այլ ոլորտներում) հաստատումը և միջանձնային շփումները: Զգալի ուշադրության է արժանացել տարածաշրջանային համագործակցության ամրապնդման խնդիրը, մասնավորապես՝ համագործակցության խթանումը ինչպես ԵՄ արտաքին սահմաններից դուրս, այնպես էլ ԵՄ հարևան պետությունների շրջանում¹⁶: Ռազմավարությունը հաստատում էր ԵՄ-ի պատրաստակամությունը՝ ձևավորելու հատուկ գործընկերային հարաբերություններ ԵՄ-ի և հարևան պետությունների միջև՝ միաժամանակ պարզ դարձնելով, որ ԵՄ-ը տվյալ պահին չի առաջարկում անդամակցության հեռանկար այդ երկրներին¹⁷:

¹³ **Delcour L. and Duhot H.**, Bringing South Caucasus Closer to Europe: Achievements and Challenges in ENP Implementation”, *Natolin Research Papers*, Department of European Interdisciplinary Studies, March 2011, pp. 7-8; **Smith K.**, *Op. cit.*, p. 759.

¹⁴ **Kahraman S.**, The European Neighborhood Policy: The European Union’s New Engagement Towards Wider Europe, *Perceptions*, Winter, 2005, p. 3.

¹⁵ European Commission. European Neighborhood Policy Strategy Paper, COM (2004) 373 final. Brussels, 12.5.2004, p. 3.

¹⁶ European Commission. European ..., *Op. cit.*, pp. 12-20.

¹⁷ European Commission. European ..., *Op. cit.*, p. 3.

Ռազմավարության մեջ ԵՀՔ-ը սահմանվում էր որպես կոնկրետ ուղղվածության առաջադեմ և տարբերակված մոտեցում, որն արտացոլում է մասնակից պետությունների կարիքները: Միաժամանակ, տարբերակումը պետք է հիմնված լիներ «ընդհանուր արժեքների հստակ հանձնառության վրա և համատեղելի լինի կապակցված տարածաշրջանային մոտեցման հետ»¹⁸:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը պաշտոնապես մեկնարկեց 2004թ.: ԵՄ-ի և գործընկեր պետությունների համատեղ մշակած Անհատական գործընկերության գործողությունների ծրագրերը (ԱԳԳԾ) սահմանվեցին որպես ռազմավարական նպատակներին հասնելու միջոց: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր գործընկեր պետություն, ԵՄ-ի հետ երկխոսության ճանապարհով, կարող է ընտրել համագործակցության համապատասխան ոլորտները և ունենալ իր սեփական ԱԳԳԾ-ը: ԱԳԳԾ-ի «համատեղ տնօրինումը» նպատակ ուներ ապահովել, որ գործընկերներն իրագործեն դրանցում նախանշված նպատակները: Չնայած նրան, որ «ԵՄ-ը չի ցանկանում իր գործընկերներին պարտադրել առաջնահերթություններ կամ նախապայմաններ»¹⁹, այդուհանդերձ, քաղաքականության հիմքում ընկած են ԵՄ-ի շահերը: ԱԳԳԾ-ում ամրագրված չափորոշիչները սահմանում են այն քայլերը, որոնք ԵՄ-ն ակնկալում է իր գործընկերներից²⁰:

2007թ. ներկայացվեց Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքը (ԵՀԳԳ)՝ նախատեսված ԵՀՔ-ի իրականացմանը ֆինանսապես աջակցելու համար: Նպատակների իրագործման ընթացքը պետք է վերահսկվի, գնահատվի և արտացոլվի դրանց առաջընթացի վերաբերյալ զեկույցներում: Որքան շատ բարեփոխումների ծրագրեր է ներկայացնում գործընկեր պետությունը, այդքան շատ աջակցություն է ստանում դրանք կյանքի կոչելու համար²¹:

ԵՀՔ-ի ընդհանուր գնահատականը տալու համար հեղինակները առանձնացնում են նոր քաղաքականության որոշ թերություններ,

¹⁸ European Commission. *European ...*, Op. cit., p. 8.

¹⁹ European Commission. *European..., ...*, Op. cit.

²⁰ **Smith K.**, Op. cit., p. 763:

²¹ European Commission, *European Neighborhood Policy Strategy Paper, ...*, pp. 25-28.

որոնք ակնհայտորեն ազդում են դրա արդյունա-վետության վրա: Հիմնական քննադատությունը վերաբերում է ԵՀՔ-ի կառուցվածքային և օպերացիոնալ սահմանափակումներին: Առավել հաճախ մատնացույց է արվում ԵՀՔ-ի՝ «բոլորի համար միևնույն սկզբունքը» մոտեցումը²²:

Որոշ հեղինակները նշում են, որ ԵՀՔ-ը չի վայելում վստահություն և չունի ներգործության լծակներ: Այդ համատեքստում Կ. Սմիթը նշում է, որ «ավելի պարզ կառուցվածքը և ճիշտ դասակարգված առաջնահերթությունները թույլ կտան, որ ԵՄ-ը տիրապետի ավելի արդյունավետ գործիքների՝ հարևան պետություններում հիմնարար բարեփոխումները խթանելու համար»²³: Այլ փորձագետներ ևս պաշտպանում են այդ պնդումը՝ նշելով, որ ԵՀՔ-ի կառուցվածքը հստակ չի սահմանում ԵՄ-ի և ԵՄ գործընկերների միջև հարաբերությունների բնույթը²⁴:

ԵՀՔ-ի շրջանակների և բնույթի հետ կապված բացթողումները լրջորեն թուլացրել են ծրագրի նկատմամբ վստահությունը: Ծրագրի աշխարհագրական շրջանակն ակնհայտորեն չափազանց լայն էր, նպատակները՝ չափազանց հավակնոտ, ԱԳԳԾ-ը՝ հաճախ ոչ հստակ և անիրատեսական: Ուստի, որոշ հետազոտողներ ԵՀՔ-ը համարում են «հայեցակարգային առումով ոչ ամբողջական, իսկ օպերացիոնալ առումով՝ անկայուն»²⁵:

Ինտեգրման աստիճանի կամայական բնույթը ևս ակնհայտ դարձրեց ԵՀՔ-ի սահմանափակումները²⁶: Անդամակցության հեռանկարը բացառելու դեպքում ԵՀՔ-ը այլևս չի ունենա որևէ էական լծակ՝

²² **Korosteleva E.**, The Eastern Partnership Initiative: A New Opportunity for Neighbours?, *Journal of Communism and Transition Politics*, **27**, 1, March, 2011, p. 11.

²³ **Smith K.**, Op. cit., p. 773:

²⁴ **Delcour L. and Tulmets E.**, Is the European Union an International Actor in the Making? The Neighborhood Policy as a Capability Test. *European Political Economy Review*, **7**, Summer 2007, p. 3; **Cornell S. and Starr F.**, The Caucasus: A challenge for Europe, *Central Asia-Caucasus Institute. Silk Road Program*, 2006, p. 74.

²⁵ **Lippert B.**, The Discussion on EU Neighborhood Policy - Concepts, Reform Proposals and National Priorities, *Friedrich Ebert Stiftung*, International Policy Analysis, July 2007, p. 2.

²⁶ **Alieva L.**, Op. cit., p. 8.

անհրաժեշտ պայմանականության սկզբունքը կիրառելու համար²⁷: ԵՀՔ-ի առաջարկած կարճաժամկետ օգուտները, այդ թվում՝ ֆինանսական օժանդակությունը և վիզային ռեժիմի դյուրացման հեռանկարը, շատ սահմանափակ են և համեստ, որպեսզի պետությունները նախաձեռնեն ԵՄ-ի նախանշած ծանր բարեփոխումները: Բացի այդ, ԵՄ անդամ պետություններում քաղաքական կամքի բացակայությունը և տարակարծությունները՝ կապված հարևան պետությունների հետ հարաբերությունների նախընտրելի ձևաչափի հետ, ինչպես նաև ԱԳԳԾ-ի կողմնակալ բնույթն՝ ի օգուտ ԵՄ-ի, պայմանավորում են ԵՀՔ-ի անարդյունավետությունն իր գլխավոր նպատակին՝ հարևան պետություններում կայունության, անվտանգության և զարգացման ապահովման հասնելու գործում²⁸: Էական թերությունների շարքում նշվում է նաև հարևան պետությունների նախընտրությունների և ներպետական զարգացումների նկատմամբ ուշադրության պակասը²⁹:

Ինչ վերաբերում է Հարավային Կովկասին, ԵՀՔ-ի ռազմավարական փաստաթղթում ուղղակիորեն նշվում էր ԵՄ-ի՝ տարածաշրջանին ավելի ակտիվ ուշադրություն դարձնելու մտադրության մասին: Նպատակների շարքում, ի թիվս այլոց, ընդգծվում էր ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների հարգման, շուկայական տնտեսության զարգացման և էներգետիկ ոլորտում համագործակցության խթանման տևական հանձնառությունը: Ռազմավարության մեջ նաև ընդգծվում էր տարածաշրջանային հակամարտությունների կարգավարման ուղղությամբ ավելի մեծ ջանքերի գործադրման և գործընկերային լավ հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը³⁰:

2004թ. Հարավային Կովկասի պետությունները ԵՀՔ-ում ընդգրկելուց հետո ԵՄ-ը ակտիվորեն մասնակցում էր տարածաշրջանային գործընթացներին՝ 2006թ. հնգամյա ժամկետով ուժի մեջ

²⁷ **Whitman R. and Wolff S.**, Much Ado about Nothing? The European Neighborhood Policy in Context in *The European Neighborhood Policy in Perspective. Context, Implementation and Impact* (Edited by R. Whitman et al.), Palgrave Macmillan. 2011, p. 13.

²⁸ **Whitman R. and Wolff S.**, Op. cit., pp. 13-15.

²⁹ **Whitman R. and Wolff S.**, Op. cit.

³⁰ European Commission. European , ..., Op. cit., pp. 11-12.

մտած ԱԳԳԾ-ի, 2005թ. Վրաստանում բացված տարածաշրջանային ներկայացուցչության և երեք տարի անց Երևանում և Բաքվում բացված երկու ներկայացուցչությունների միջոցով: ԵՄ-ի ընդլայնված ներկայությունն արտացոլվեց նաև ֆինանսական օժանդակության վերանայմամբ՝ զգալիորեն մեծանալով ԵՀԳԳ-ի մեկնարկից հետո:

Այդուհանդերձ, ԵՀԲ-ի բոլոր վերոնշյալ թերություններն իրենց ուղղակի ազդեցությունն ունեցան Հարավային Կովկասում ԵՄ Հարևանության քաղաքականության իրականացման վրա: Ավելին, ԵՄ քաղաքականության անարդյունավետությունն ավելի ակնհայտ դարձավ տարածաշրջանային ներգրավման բացակայության և տարածաշրջանային պետությունների տարբեր պետական առաջնահերթությունների պատճառով: Որոշ ժամանակ անց պարզ դարձավ, որ ԵՄ-ի նոր քաղաքականությունը, հիմնված տարածաշրջանային մոտեցման և տարբերակման քաղաքականության համադրման վրա, արդյունավետ չէ Հարավային Կովկասի դեպքում:

Գնահատելով տարածաշրջանում ԵՀԲ-ի գործարկումը՝ Լ. Դելկուրը և Ն. Դուհոն նշում են, որ հաշվի առնելով Հարավային Կովկասի տարածաշրջանի բարդությունը և տարածաշրջանային պետությունների տարբեր ժառանգություններն ու նկրտումները, ԵՄ-ի երկակի նպատակը՝ տարածաշրջանային համագործակցության խթանումը և գործընկեր պետությունների միջև տարբերակումն, ավելի անորոշ է դառնում Հարավային Կովկասի դեպքում³¹: Այդ տեսանկյունից Հարավային Կովկասի նկատմամբ ԵՄ-ի տարածաշրջանային հեռանկարը կարող է ներկայացվել մի շարք օրինակներով: Բաքվի կողմից Կիպրոսի թուրքական հանրապետության հետ առևտրային ավիաչվերթների բացման պատճառով, ինչը հակասում է ԵՄ-ի չճանաչման քաղաքականությանը, բոլոր երեք ԱԳԳԾ-ների ստորագրությունը հետաձգվեց՝ չնայած Հայաստանի և Վրաստանի բողոքներին, որոնցում նշվում էր մի երկրում ընթացող զարգացումները մեկ այլ երկրում իրականացվող բարեփոխումների հետ կապելու անարդյունավետության մասին: Մեկ այլ օրինակ է Բաքվում և Երևանում ԵՄ ներկայացուցչությունների համաժամանակյա բացումը՝ խուսափելու երկու հակամարտող կողմերի միջև ցանկացած քաղաքական ասիմե-

³¹ L. Delcour and H. Duhot, Op. cit., p. 10:

տրիպլից և ներկայանալու որպես հավասարակշռված և չեզոք գործընկեր: Ինչպես Լ. Միման և Մ. Ֆրեյրեն նշում են, տարածաշրջանի այդպիսի ընկալման արդյունավետությունը սպառվել է, քանզի այն անտեսում է այդ պետությունների ավանդական և նոր տարբերությունները: Բացի այդ, տարածքի աշխարհագրական մոտեցման վրա հիմնված տարածաշրջանային չափումը չի արտացոլում յուրաքանչյուր պետության ներսում ընթացող զգալիորեն տարբեր քաղաքական, տնտեսական և անվտանգության ոլորտի հետ կապված իրողությունները³²:

Միաժամանակ, ԵՄ-ի հետ կնքած ԵՀՔ Գործողության երեք ծրագրերը, չնայած ուղղակիորեն խրախուսում էին տարածաշրջանային համագործակցության խթանումը, այդուհանդերձ սահմանում էին միմյանց հետ բարդ համադրելի նպատակներ: Մասնավորապես, եթե ԵՄ-Հայաստան Գործողության ծրագրում հիշատակվում էր ազգերի ինքնորոշման իրավունքը, ապա ԵՄ-Ադրբեջան Գործողության ծրագրում՝ տարածքային ամբողջականության սկզբունքը³³: Չնայած այդ անհամապատասխանությունը կարող է մեկնաբանվել երկկողմ բանակցային գործընթացներով և շահերի տարբերությամբ, դա ակնհայտորեն խոչընդոտում էր ԵՀՔ-ի միջոցով տարածաշրջանային համագործակցության խթանման գործընթացին: Հարավային Կովկասում ԵՀՔ-ի անարդյունավետությունը փաստում է նաև ԵՄ-ի թույլ ներգրավվածությունը տարածաշրջանային անվտանգության խնդիրների կարգավորման գործում: Ինչպես արդեն նշվել է, ԵՀՔ-ի գլխավոր նպատակներից մեկն է իր նոր սահմանների անվտանգության, կայունության և զարգացման ապահովումը: ԵՄ-ը ձգտում է կայունացնել տարածաշրջանը ԵՀՔ-ի շրջանակներում՝ ինստիտուցիոնալ համագործակցության, տնտեսական ինտեգրման, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության խնդիրների լուծման գործում իր

³² **Simão L. and Freire R.**, The EU's Neighborhood Policy and the South Caucasus: Unfolding New Patterns of Cooperation, *Caucasian Review of International affairs*, 2, 4, 2008, p. 225.

³³ European Commission. EU-Armenia Action Plan 2006, available at http://ec.europa.eu/world/enp/pdf/action_plans/armenia_enp_ap_final_en.pdf; European Commission, EU-Azerbaijan Action Plan 2006, available at http://ec.europa.eu/world/enp/pdf/action_plans/azerbaijan_enp_ap_final_en.pdf.

դերակատարության մեծացման ճանապարհով: Այդուհանդերձ, ԵՄ-ը ուղղակիորեն ներգրավված չէ տարածաշրջանային հակամարտությունների լուծման բանակցային գործընթացներում, ինչը խոչընդոտում է տարածաշրջանային համագործակցության զարգացմանը:

Գիտակցելով ԵՀՔ-ի բացթողումները՝ 2006թ. դեկտեմբերին Եվրոպական հանձնաժողովն իր հաղորդագրության մեջ դիմեց Եվրոպական խորհրդին և Եվրոպական խորհրդարանին՝ նշելով Եվրոպական հարևանության քաղաքականության ամրապնդման անհրաժեշտության մասին: Եղան ԵՀՔ-ի արդյունավետության մեծացմանն ուղղված այլ նախաձեռնություններ ևս, մասնավորապես, նաև ԵՄ նախագահությանն առաջարկված գերմանական ԵՀՔ+ նախաձեռնությունը: Սակայն, ակնհայտ էր, որ անհրաժեշտ են ավելի արդյունավետ միջոցներ:

Սևծովյան սիներգիա

Արևելյան ուղղությամբ Հարևանության քաղաքականության ամրապնդման համար 2007թ. ապրիլին ԵՄ-ը նախաձեռնեց տարածաշրջանային համագործակցության նոր ծրագիր՝ Սևծովյան սիներգիան: Նոր նախաձեռնությունը, նախատեսված ԵՀՔ-ի երկկողմ համագործակցությանը հաղորդելու ավելի մեծ ու հստակ տարածաշրջանային համակարգվածություն, աջակցում է տարածաշրջանային զարգացմանը՝ խրախուսելով Սևծովյան տարածաշրջանի երկրների միջև համագործակցությունը³⁴: Սիներգիան առաջարկում է ֆորում՝ ընդհանուր խնդիրների քննարկման համար, միաժամանակ խթանելով քաղաքական և տնտեսական բարեփոխումների իրականացումը՝ էլեկտրաէներգիայի, տրանսպորտի, շրջակա միջավայրի և անվտանգության ոլորտների վրա առանձնակի կենտրոնացմամբ³⁵: Ծրագրի ներկայացումը Սևծովյան տարածաշրջանի և, անկասկած, նաև Հարավային Կովկասի նկատմամբ, ԵՄ-ի աճող հետաքրքրության դրսևորումներից

³⁴ Սևծովյան տարածաշրջանը ներառում է Հունաստանը, Բուլղարիան, Ռումինիան, Մոլդովան, Ուկրաինան, Ռուսաստանը, Թուրքիան, ինչպես նաև՝ Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը:

³⁵ European Commission. Black Sea Synergy, Brussels, 15 March 2010.

եր: Այդուհանդերձ, նոր նախաձեռնությունն ունեցավ սահմանափակ հաջողություն՝ գլխավորապես տարածաշրջանային պետությունների տարբեր շահերի պատճառով: Վրաստանը հստակ դրսևորվում էր որպես Սևծովյան երկիր: Ակտիվորեն մասնակցելով Սևծովյան պետությունների միջև համագործակցության խորացման ջանքերին՝ Վրաստանը Սևծովյան սիներգիայի շրջանակը դիտարկում էր որպես ԵՄ-ի հետ հարաբերությունների ամրապնդման, ինչպես նաև ԵՄ-ին ինտեգրման հնարավորություն³⁶: Ադրբեջանը չունի Սևծովյան տարածաշրջանին պատկանելու խնդիր և ներկայանում է որպես կասպիական պետություն: Թեև կան ընդհանուր հետաքրքրության ոլորտներ, մասնավորապես՝ էներգետիկ անվտանգությունը, երկիրն այնքան էլ հետաքրքրված չէ Սևծովյան սիներգիայի ծրագրով³⁷:

Ինչ վերաբերում է Հայաստանին, քանզի այն իր աշխարհագրական դիրքով Սևծովյան պետություն չէ, ուստի զուտ աշխարհագրական և քաղաքական պատճառներով ներգրավված չէ Սևծովյան սիներգիայի նախաձեռնության մի շարք առանցքային ոլորտներում՝ շրջակա միջավայր, էներգետիկ ոլորտ, տրանսպորտ, ծովային անվտանգություն և ձկնորսություն: Ուստի, զարմանալի չէ, որ Հայաստանն իրեն օտարված է զգում այդ նախագծից³⁸:

Ակնհայտ է, որ բացի տարածաշրջանի պետությունների տարբեր դիրքորոշումներից և տարածաշրջանային ինտեգրման բացակայությունից, Ռուսաստանի առճակատման քաղաքականությունն առանձին գործընկեր պետությունների, մասնավորապես, Վրաստանի հետ հարաբերություններում ևս նպաստել է Սևծովյան սիներգիայի թուլացմանը և սահմանափակ հաջողությանը:

³⁶ **Gogolashvili K.**, The EU and Georgia: The Choice is in the Context, in *The European Union and the South Caucasus. Three perspectives on the South Caucasus* (Edited by A. Schmidt et al.), Europe in dialogue, Bertelsmann Stiftung, 2009/01, p. 101.

³⁷ **Huseynov T.**, The EU and Azerbaijan: Destination unclear in *The European Union and the South Caucasus. Three perspectives on the South Caucasus* (Edited by A. Schmidt et al.), Europe in dialogue, Bertelsmann Stiftung, 2009/01, pp. 54-56.

³⁸ **Mkrtchyan T.**, Armenia's European Future, *The European Union and the South Caucasus. Three perspectives on the South Caucasus*, (Edited by A. Schmidt et al.), Europe in dialogue, Bertelsmann Stiftung, 2009/01, p. 28.

Արևելյան գործընկերությունը

Արևելյան գործընկերության (ԱԼԳ)՝ որպես վեց հետխորհրդային պետություններ³⁹ ընդգրկող հավակնոտ նախաձեռնություն, ստեղծու-մը նախատեսված էր ոչ միայն Ասոցացման և ԽՀԱԱԳ համաձայ-նագրերի կնքման հեռանկարի ճանապարհով գործընկեր պետություն-ների հետ հարաբերությունների ամրապնդումը իրականելու, այլև ԵՀՔ-ի թերությունները վերացնելու համար:

Նախաձեռնության համար իր թան հանդիսացան մի քանի իրադարձություններ: Նախ, 2008թ. հուլիսին Փարիզում մեկնարկեց Ֆրանսիայի գլխավորած Միջերկրածովյան միությունը: Ապա, 2008թ. ռուս-վրացական օգոստոսյան պատերազմը պատճառ դարձավ Հարավային Կովկասում ԵՄ-ի ավելի ակտիվ ներգրավվածության համար: Ինչպես նշում են որոշ փորձագետներ, նոր նախաձեռնության մեկնարկն ակնհայտորեն ռուս-վրացական պատերազմի հետևանքնե-րից մեկն էր. պատերազմ, որն ընկալվում է որպես վերածնվող՝ ավելի հաստատակամ և ռեսուրսներով հարուստ Ռուսաստանի արտաքին խորհրդանիշ⁴⁰:

Օգոստոսյան իրադարձություններից հետո տարածաշրջանը հայտնվեց համաշխարհային և տարածաշրջանային քաղաքակա-նության կենտրոնում: ԵՄ նախագահությունը ստանձնած Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին ակտիվորեն ներգրավվեց Ռուսաստանի և Վրաստանի միջև հակամարտության կարգավորման գործում՝ միջնորդելով հրադադարի հաստատմանը: ԵՄ-ը գումարեց արտահերթ գազաթաժողով Հարավային Կովկասի իրավիճակի վերաբերյալ: Ի լրումն, ԵՄ հովանու ներքո գործող Բրյուսելի դոնորների համաժողովը համաձայնության եկավ Վրաստանին ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ: Հակամարտության արդյունքում ԵՄ-ի

³⁹ Ծրագիրը ներառում է Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովան, Ուկրաինան և Բելառուսը:

⁴⁰ **Popescu N.**, Eastern Partnership and the South Caucasus in *Eastern Partnership for the South Caucasus* (Edited by I. Lomashvili and A. Watt). Georgian Biographical Center. Tbilisi, 2011, pp. 114-115; **Balfour R.**, Debating the Eastern Partnership: Perspectives from The European Union, *IPG* 3/2011, p. 30.

ազդեցությունը տարածաշրջանում դարձավ ավելի տեսանելի՝ ԵՄ դիտորդական առաքելության ստեղծման ճանապարհով:

2008թ. մայիսի 26-ին Լեհաստանը և Շվեդիան ԱլԳ-ի ստեղծման առաջարկը ներկայացրեցին ԵՄ Ընդհանուր հարցերի և արտաքին կապերի խորհրդին: Ի պատասխան Վրաստանում սկսված պատերազմի, Եվրոպական խորհուրդն արագ հավանության արժանացրեց առաջարկը, և արդեն 2008թ. դեկտեմբերին Հանձնաժողովը պաշտոնապես ներկայացրեց իր առաջարկները: 2009թ. մայիսին Պրահայի գագաթաժողովում մեկնարկած Արևելյան գործընկերությունն այսօր Հարավային Կովկասում ԵՄ քաղաքականության պաշտոնական ձևաչափն է:

Առաջարկը նպատակ ուներ խթանել և խրախուսել քաղաքական ու տնտեսական բարեփոխումները, որոնք անհրաժեշտ էին վեց հետխորհրդային պետություններում խաղաղության, բարգավաճման և անվտանգության ապահովման համար՝ առաջարկելով «ավելի կոնկրետ աջակցություն, քան երբևէ նախկինում»⁴¹:

ԱլԳ-ի գլխավոր նպատակն է ստեղծել ԵՄ-ի և շահագրգիռ գործընկեր պետությունների⁴² միջև քաղաքական ասոցացումն արագացնելու և տնտեսական ինտեգրումը խորացնելու համար անհրաժեշտ պայմաններ՝ «ավելին՝ ավելիի դիմաց» բանաձևի հիման վրա: 2011թ. սեպտեմբերին Վարշավայում կայացած ԱլԳ-ի գագաթաժողովի ժամանակ ԵՄ-ը հայտարարեց, որ «ԵՄ առաջնորդներն ընդունում են եվրոպական նկրտումները և որոշ գործընկերների եվրոպական ընտրությունը»⁴³:

⁴¹ **Ferrero-Waldner B.**, Eastern Partnership - an ambitious project for 21-st century European foreign policy, 20 February 2009.

⁴² Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit. Prague. 7 May, 2009. http://ec.europa.eu/europeaid/where/neighbourhood/eastern_partnership/documents/prague_summit_declaration_en.pdf.

⁴³ Joint Declaration of the Warsaw Eastern Partnership Summit. Warsaw. 30 September, 2011. http://europa.eu/rapid/press-release_PRES-11-341_en.htm.

Մկզբնական փուլի ձախողումը

Հաշվի առնելով ԵՀԲ-ի թերությունները՝ Արևելյան գործընկերության նախաձեռնությունը նախատեսված էր առաջարկելու ավելի մեծ տարբերակում՝ գործընկերների անհատական կարիքներին և ձգտումներին ավելի արդյունավետ արձագանքելու համար: Դա պետք է իրականացվեր գործընկեր պետությունների հետ երկկողմ հարաբերությունների հաստատման ճանապարհով:

Երկկողմ մակարդակում ԵՄ-ը Հարավային Կովկասի պետություններին առաջարկում է Միության հետ նոր սերնդի Ասոցացման համաձայնագրեր կնքելու հեռանկարը, որոնք կփոխարինեն Գործընկերության և համագործակցության համաձայնագրերին և ճանապարհ կհարթեն ԵՄ-ի հետ ավելի սերտ ասոցացման համար: Սյոուհանդերձ, ԵՄ-ը չի առաջարկում ապագա լիարժեք անդամակցության հեռանկար: Ասոցացման համաձայնագրի անբաժանելի մաս է յուրաքանչյուր պետության հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագիրը, որը ենթադրում է ոչ միայն ազատ առևտուր, այլև զգալի ինստիտուցիոնալ փոփոխություններ և Եվրոպական ընդհանուր օրենսդրության զգալի թվով նորմերի որդեգրում: Համաձայնագիրը նպատակ ունի արդիականացնել պետությունների տնտեսությունները և, ամենայն հավանականությամբ, հետագայում ձևավորել Հարևանության տնտեսական համայնք: ԱլԳ-ն առաջարկում է նաև վիզային ռեժիմի դյուրացման բանակցություններ, երկրաբաժանվետ հեռանկարում առանց վիզային ռեժիմի մուտքի վերաբերյալ երկխոսություն, ինչպես նաև անդամակցություն Էներգետիկ համայնքին:

Բազմակողմ համագործակցությունը, որն ուղղված է բազմակողմ հարաբերությունների զարգացմանը՝ ԵՄ-ի կամ երրորդ կողմերի մասնակցությամբ, ապահովելու ընդհանուր հարցերի քննարկման պլատֆորմ, գործընկերների շրջանում զարգացնելու ընդհանուր դիրքորոշումներ և համատեղ գործունեություն, իրակա-նացնելու ընդհանուր շահերի ոլորտների վերաբերող միջսահմանային խոշոր նախագծեր և բազմամակարդակ նախաձեռնություններ՝ չորս թեմատիկ

պլատֆորմների շրջանակում⁴⁴, պետություններին հնարավորություն է տալիս ընտրել համապատասխան ոլորտներում իրենց մասնակցության և ներգրավվածության ծավալը: Համագործակցության ամրապնդման մեկ այլ փորձ էր Քաղաքացիական հասարակության ֆորումի և ԵՄ-Հարևանություն խորհրդարանական վեհաժողովի (Եվրանեսթ) ձևավորումը նախարարական մակարդակից դուրս⁴⁵: Այդուհանդերձ, դեռ կա որոշ անհստակություն՝ ԱլԳ-ի առաջնահերթությունների վերաբերյալ, և տարաձայնություններ՝ նախաձեռնության ընկալման հետ կապված, ինչպես ԵՄ անդամ, այնպես էլ գործընկեր պետություններում⁴⁶: ԱլԳ-ի վերաբերյալ բանավեճը շարունակվում է ԵՄ արտաքին քաղաքականության շրջանակներում: Որոշ փորձագետներ պնդում են, որ ԱլԳ-ը ԵՀՔ-ի արդեն գործող մեխանիզմների կրկնօրինակն է, որը որևէ նոր բան չի առաջարկում⁴⁷:

Գնահատելով ԱլԳ-ի արդյունավետությունը և սահմանափակումները՝ հետազոտողները նշում են, որ չնայած առանձին գործընկեր պետություններում իրականացվող բարեփոխումների գործընթացում ԵՄ-ի ներգրավվածության ապահովման համար կիրառվող որոշ մեխանիզմների առկայությանը, որոնք կերաշխավորեն ավելի տարբերակված մոտեցում՝ ի տարբերություն ԵՀՔ-ի՝ «բոլորի համար միևնույն մեխանիզմը» սկզբունքի, այդուհանդերձ, առանց անդամակցության հստակ հեռանկարների կամ ավելի մեծ ֆինանսական օժանդակության, ԱլԳ-ը գրավիչ չի լինի գործընկեր պետությունների կառավարությունների և հասարակության համար⁴⁸:

Ավելին, ինչպես նշում է Կորոստելյովան, «ԵՄ-ին ակնհայտորեն չի հաջողվում դուրս գալ գործընկերության իր եվրակենտրոն

⁴⁴ I Պլատֆորմ՝ «Ժողովրդավարություն, լավ կառավարում և կայունություն», II պլատֆորմ՝ «տնտեսական ինտեգրում և ԵՄ քաղաքականության հետ մոտարկում», III պլատֆորմ՝ «Էներգետիկ անվտանգություն», IV պլատֆորմ՝ «Միջանձնային շփումներ»:

⁴⁵ European Commission, Eastern Partnership. COM (2008) 823 final. Brussels, 3.12.2008.

⁴⁶ **Gromadzki G.**, A Challenging Opportunity. The EU plus Six - The Eastern Partnership, *Friedrich Ebert Stiftung*, November 2010, p. 1.

⁴⁷ **Łapczyński M.**, The European Union's Eastern Partnership: Chances and Perspectives, *Caucasian Review of International Affairs*, **3**, 2, Spring 2009, p. 149.

⁴⁸ **Kempe I. et al.**, *Eastern Partnership and the Caucasus. Strategic Input from the Region*. Heinrich Böll Stiftung, South Caucasus, 2009, p. 2.

տեսլականի շրջանակներից»⁴⁹: Ակնհայտորեն, ԱլԳ-ի շրջանակներում ԵՄ-ը նախնառաջ առաջնորդվում է իր առաջնահերթություններով և շահերով՝ այդպիսով ձևավորելով գործընկերության ասիմետրիկ շրջանակներ: ԱլԳ-ի ավելի խոր ուսումնասիրությունը փաստում է, որ ԵՄ-ը առաջնահերթ կարևորում է իր սեփական օրակարգը: Դա հատկապես ակնհայտ է ժողովրդավարության, օրենքի գերակայության կամ տնտեսության ոլորտներում բավական տեխնոկրատական համագործակցության և էներգետիկ ու տրանսպորտի ոլորտի համագործակցությանը տրված առաջնայնության լույսի ներքո:

Որոշ փորձագետներ նշում են, որ թեև ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, օրենքի գերակայությունը և լավ կառավարումը եվրոպական տարածաշրջանային ինտեգրման ծրագրերի առանցքային առաջնահերթություններից են, տարածաշրջանի պետություններն առավել հետաքրքրված են ԵՄ-ի հետ համագործակցության այլ ոլորտներով, այդ թվում՝ հակամարտությունների կարգավորում, առևտուր, էներգետիկ ոլորտ, վիզային ռեժիմի դյուրացում⁵⁰: Ակնհայտորեն, հաշվի առնելով աշխարհաքաղաքական և տնտեսական իրողությունները, տարածաշրջանային պետությունների ակնկալիքները ավելի հաճախ սահմանափակվում են կարճաժամկետ տեսանելի օգուտներով՝ ավելի մեծ ֆինանսական օժանդակություն, առևտուր, ներդրումներ, տարածաշրջանային անվտանգության խնդիրների կարգավորման այլընտրանքային մեխանիզմներ և արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացիա, քան ասոցացման անորոշ երկարաժամկետ հեռանկարներով՝ պայմանավորված պետության արձանագրած ժողովրդավարական առաջընթացով:

Չնայած ԱլԳ-ը ի սկզբանե չի ձևավորվել որպես աշխարհաքաղաքական նախագիծ, այն, ըստ էության, վճռորոշ ազդեցություն կունենա հետխորհրդային տարածքում՝ վտանգելով Ռուսաստանի տնտեսական, քաղաքական և աշխարհաքաղաքական շահերը՝ իր «անմիջական հարևանությամբ»: Այդ տեսանկյունից, ԱլԳ-ը չի տրամադրում անվտանգության երաշխիքներ իր արևելյան գործընկերներին ևս՝ բացառելով անդամակցության հեռանկարը: Միաժա-

⁴⁹ Korosteleva E., Op. cit., p. 11

⁵⁰ Popescu N., Op. cit., p. 116

մանակ, ԽՀԱԱԳՀ-ի իրականացման հեռանկարը բավական անորոշ է: Քննադատությունը գլխավորապես վերաբերում է այն հանգամանքին, որ, լինելով հեռահար և բարդ նպատակ, ԽՀԱԱԳՀ-ը չի ապահովում կարճաժամկետ օգուտներ, ինչը խթան կհանդիսանար, որ գործընկեր պետությունները նախաձեռնեն առևտրի ազատականացման ծախսատար և ծանր բարեփոխումները, որոնք հաճախ չեն համընկնում տնտեսական զարգացման ներպետական մոդելների հետ⁵¹: Ինչ վերաբերում է ԱլԳ-ի շրջանակներում մեկ այլ կարևոր՝ էներգետիկ ոլորտին, ապա ակնհայտորեն ԱլԳ-ի պետությունների և ԵՄ-ի միջև հարաբերությունները հիմնականում ծավալվում են եվրոպական էներգետիկ շահերի շուրջ:

Վիզային ռեժիմի ազատականացումն առաջարկի առավել գրավիչ խթան է և բանակցային գործընթացում ԵՄ-ի գլխավոր լծակ: Սակայն, դա նույնպես պահանջում է ԵՄ անդամ պետությունների հանձնառությունը գործընթացի ողջ ընթացքում՝ ապահովելու, որ վիզային ռեժիմի ազատականացումը իրականություն դառնա բոլոր գործընկեր պետությունների համար⁵²: Բացի այդ, հաշվի առնելով փախստականների հետ կապված եվրոպական ճգնաժամը, կարելի է վստահորեն ենթադրել, որ վիզային ռեժիմի ազատականացման գործընթացը կլինի պայմանական՝ անվտանգության նկատառումներով: Դա կարող է գործընկեր պետությունների մուտքն առանց վիզային ռեժիմի դարձնել պակաս ողջունելի որոշ ԵՄ անդամ պետությունների համար:

Բոլոր վերոնշյալ թերություններն, անկասկած, իրենց ազդեցությունն են ունեցել արևելյան ուղղությամբ ԵՄ արտաքին քաղաքականության զարգացման վրա, ու, թերևս, նպաստել են ճգնաժամի ձևավորմանը: ԵՄ-ի Արևելյան գործընկերության ճգնաժամը սկիզբ առավ Հայաստանում: ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիր կնքելու համար պահանջվող բարեփոխումների գործընթացը նախաձեռնելուց հետո, որը տևեց գրեթե չորս տարի, 2013թ. սեպտեմբերի 3-ին Հայաստանը դուրս եկավ Ասոցացման համաձայնագրի վերաբերյալ բանակցային գործընթացից և միացավ Մաքսային միությանը:

⁵¹ Popescu N., Op. cit., p. 117

⁵² Popescu N., Op. cit., p. 120

2013թ. նոյեմբերին Վիլնյուսում կայացած Արևելյան գործընկերության գագաթաժողովի ժամանակ ընդգծվում էր վեց հետխորհրդային պետությունների և Բրյուսելի միջև համագործակցության ամրապնդմանն ուղղված ԵՄ-ի առաջատար ծրագրի ձախողման մասին, այն բանից հետո, երբ Ուկրաինան և Հայաստանը հրաժարվեցին խորացնել ԵՄ-ի հետ հարաբերությունները Ասոցացման համաձայնագրի կնքման ճանապարհով⁵³: Բոլոր վեց երկրներից միայն Վրաստանը և Մոլդովան հայտարարեցին, որ ԵՄ-ի հետ կկնքեն Ասոցացման և ԽՀԱԱԳ համաձայնագրեր:

Վիլնյուսի գագաթաժողովից հետո պարզ դարձավ, որ վեց արևելյան հարևաններն այլևս չեն կարող դիտարկվել որպես մեկ դաշինք: Դրանցից երեքը (Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան) ցանկանում են ավելի սերտ հարաբերություններ հաստատել ԵՄ-ի հետ՝ ընդհուպ մինչև լիարժեք անդամակցություն, Հայաստանը և Բելառուսը նախընտրեցին Եվրասիական տնտեսական միությունը, մինչդեռ Ադրբեջանը կորցրել է իր հետաքրքրությունը ծրագրի նկատմամբ՝ քաջ գիտակցելով, որ անկախ ամեն ինչից Բրյուսելը հետաքրքրված է իր էներգակիրներով: Ակնհայտորեն, ԱլԳ-ի շրջանակներում գործընկեր պետությունների շահերի և առաջնահերթությունների տարբերությունն ավելի ուժեղ արտացոլվում է Հարավային Կովկասի դեպքում:

Վիլնյուսում ԵՄ-ը և ԵՄ գործընկերներ պետությունները վերահաստատեցին եվրոպական նկրտումները և որոշ գործընկերների եվրոպական ընտրությունն⁵⁴ ու պարտավորվեցին աջակցել նրանց, ովքեր ձգտում են ԵՄ-ի հետ ավելի սերտ հարաբերություններ հաստատել⁵⁵, չնայած նրան, որ Ուկրաինայում բռնկված պատերազմը

⁵³ Ուկրաինայի նախագահ Յանուկովիչը հրաժարվեց ստորագրել ԵՄ ասոցացման համաձայնագիրը, ինչի արդյունքում Կիևում սկսվեցին բողոքի ակցիաներ, որոնք վերաճեցին Մայդանի շարժմանը: Վերջինս հանգեցրեց Յանուկովիչի պաշտոնանկությանը, Ղրիմի միավորմանը Ռուսաստանի հետ և Արևելյան Ուկրաինայում պատերազմի սկսմանը: 2014թ. Ուկրաինայի նոր իշխանություններն, ի վերջո, ստորագրեցին համաձայնագրերը:

⁵⁴ Joint Declaration of the Vilnius Eastern Partnership Summit. Vilnius. 29 November, 2013,

http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/EN/foraff/139765.pdf.

⁵⁵ Joint Declaration of the Vilnius Eastern Partnership Summit...

և Ռուսաստանի գործոնը ավելի էին բարդացնում այդ գործընթացը: Ինչ վերաբերում է երեք հարավկովկասյան պետությունների հետ հարաբերությունների զարգացմանը, 2014թ. հունիսին Վրաստանը կնքեց Ասոցացման և ԽՀԱԱԳ համաձայնագրեր: Հայաստանի դեպքում, չնայած սկզբնական սառը արձագանքին, ԵՄ-ը պատրաստակամություն հայտնեց լինել ճկուն և վերանայել ԱլԳ-ի մոդելը: Դրա արդյունքում համագործակցության մի շարք մոդելներ, որոնք համընկնում են Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցությամբ ստանձնած հանձնառություններին, շարունակում են գործել: ԱլԳ-ի նկատմամբ Ադրբեջանի ոգևորությունը շարունակում է նվազել: Ուստի, գործընկերությունը գլխավորապես կենտրոնանում է երկրի էներգետիկ ոլորտների վրա:

Ավելի մեծ տարբերակմանն ուղղված փորձեր

2015թ. մայիսի 21-22-ը անցկացված Ռիգայի գագաթաժողովը վերահաստատեց ԵՄ-ի հանձնառությունը՝ հաստատելու ավելի սերտ և տարբերակված հարաբերություններ իր արևելյան գործընկերների հետ: ԵՄ-ը վերջիններիս առաջարկեց իր աջակցությունը՝ դիմակայելու Ռուսաստանի ճնշմանը և տարածաշրջանում անվտանգությանն ու կայունությանը սպառնացող մարտահրավերներին: Վերլուծելով Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ կնքած Ասոցացման և ԽՀԱԱԳ համաձայնագրերի իրականացման ավելի վաղ փուլերը՝ եվրոպական առաջնորդները վերահաստատեցին իրենց աջակցությունն արևելյան գործընկերներին՝ Համաձայնագրերի հետագա իրականացման գործում: ԵՄ-ը նաև վերահաստատեց Ուկրաինայի, Վրաստանի և Մոլդովայի «եվրոպական ձգտումները և եվրոպական ընտրությունը» և պատրաստակամություն հայտնեց բացել առանց վիզային ռեժիմի մուտքը, երբ բավարարվեն բոլոր պահանջները⁵⁶:

ԵՄ-ը նաև պատրաստակամություն հայտնեց աջակցել այն արևելյան գործընկերներին, որոնք ցանկություն ունեն ԵՄ-ի հետ հաստատել ավելի ճկուն հարաբերություններ: Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը ԱլԳ-ի գագաթաժողովի արդյունքներով

⁵⁶ Joint Declaration of the Riga Eastern Partnership Summit. Riga, 22 May, 2015, http://ceas.europa.eu/eastern/docs/riga-declaration-220515-final_en.pdf.

կազմակերպված մամուլի ասուլիսի ժամանակ նշում էր. «Մենք վերահաստատեցինք մեր աջակցությունը այն պետություններին, որոնք ձգտում են հաստատել անհատական հարաբերություններ: Հայաստանի հետ ձեռք է բերվել համաձայնություն մեր ապագա հարաբերությունների շրջանակների վերաբերյալ: Մենք պետք է նաև ձեռնարկենք մի շարք քայլեր՝ խորացնելու Բելառուսի հետ մեր փոխգործակցությունը: Մենք նաև ընդունել ենք Ադրբեյջանի առաջարկը⁵⁷, որը վերաբերում է պայմանագրային հիմունքներով ԵՄ-ի հետ հարաբերությունները նորացնելուն»⁵⁸:

Նախագահ Տուսկը նաև նշում էր, որ «էներգետիկ և տրանսպորտային ոլորտների համագործակցությունը կլինի առաջնահերթություն ԱլԳ-ի օրակարգում առաջիկա տարիներին»⁵⁹՝ պարզ դարձնելով, որ սովյալ պահին օրենքի գերակայությանը, մարդու իրավունքներին և ժողովրդավարության խթանմանը վերաբերող հարցերն առաջնահերթ չեն ԵՄ-ի համար: Եվրոպական առաջնորդները նաև ձեռնպահ մնացին արևելյան գործընկերության պետություններում առկա հակամարտությունների կարգավորման գործում ակտիվ մասնակցություն ունենալուց՝ հանգելով եզրակացության, որ ԱլԳ-ը չի տրամադրում դրանց արձագանքելու համապատասխան գործիքներ:

Ռիգայում կայացած ԱլԳ-ի բիզնես ֆորումի նշանակալի հաջողություններից էր Եվրոպական հանաձնաժողովի նախաձեռնած ԽՀԱԱԳՀ-ի օժանդակությունը փոքր և միջին ձեռնարկություններին, որը փոքր բիզնեսի համար պետք է ապահովեր երկու միլիարդ եվրոյի ներդրումներ Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում⁶⁰:

Ընդհանուր առմամբ, Ռիգայի գագաթաժողովը ցուցադրական հանդիպում էր Վիլնյուսից հետո, և զարմանալի չէ, որ այն զերծ էր

⁵⁷ On the eve of the Riga Summit the Azeri foreign minister submitted a position paper proposing a strategic partnership between Baku and the EU.

⁵⁸ Remarks by President Donald Tusk at the press conference of the Eastern Partnership summit (22/05/2015),

http://eeas.europa.eu/delegations/ukraine/press_corner/all_news/news/2015/2015_05_22_3_en.htm.

⁵⁹ Remarks by President ..., Op. cit.

⁶⁰ “EU to unlock €2 billion worth of investment for small businesses in Georgia, Moldova and Ukraine”. European Commission, Press release. Brussels, 21 May 2015, http://europa.eu/rapid/press-release_IP-15-5012_en.htm.

արևելյան գործընկերների հետ հարաբերությունների վերձևակերպման վերաբերյալ կոնկրետ նախաձեռնություններից կամ նշանակալի հայտարարություններից՝ գլխավորապես տարածաշրջանում աճող աշխարհաքաղաքական լարվածության, ինչպես նաև Ռուսաստանի գործողությունների արդյունքում առաջ եկած սահմանափակումների և զգուշավորության պատճառով: Ուստի, ԵՄ-ը որևէ խոստում չովեց Ուկրաինային, Մոլդովային և Վրաստանին՝ ապագա անդամակցության բանակցությունների վերաբերյալ:

Մինչ եվրոպական առաջնորդները բանակցությունների օրակարգից հանեցին ապագա անդամակցության նույնիսկ աղոտ հեռանկարը, ԵՄ-ը ամրապնդեց տարբերակման գաղափարը և ներկայացրեց ԱլԳ-ի երկմակարդակ մոտեցումը⁶¹: Նոր մոտեցման հիմքում ընկած էր այն գաղափարը, որ այսուհետ ԵՄ-ը ջանքերը կկենտրոնացնի երեք առավել եվրոպամետ պետությունների՝ Ուկրաինայի, Վրաստանի և Մոլդովայի, հետ հարաբերությունների ամրապնդման վրա, մինչդեռ Հայաստանը, Ադրբեյջանը և Բելառուսը կկազմեն ավելի ազատ ասոցացված խումբ և կդառնան երկրորդական կարևորության պետություններ: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ Ռիգայի գագաթաժողովը չէր նախատեսում ԱլԳ-ի որևէ կառուցվածքային փոփոխություն:

Այդ համատեքստում որոշ փորձագետներ պնդում են, որ միայն երկմակարդակ մոտեցման ներկայացումը բավարար չէ ապահովելու ԵՄ-ի՝ արևելյան ուղղությամբ ավելի արդյունավետ և հաջող քաղաքականության իրականացում և «ներկայումս ոչ Ասոցացման համաձայնագրի պետությունների խմբի շրջանում հետագա տարբերակման անհրաժեշտություն կա, քանզի ԵՄ-ի հետ համագործակցելու շարժառիթի և հավակնության մակարդակները տարբեր են Հայաստանի, Ադրբեյջանի և Բելառուսի դեպքում»⁶²: Միաժամանակ, ԵՄ-ը դեռ չի դրսևորում հստակ և հետևողական քաղաքականություն արևելյան գործընկերության շրջանակներում: Դա են փաստում երկակի

⁶¹ “Two tier Eastern Partnership on the table at Riga summit”, <http://www.euractiv.com/sections/europes-east/two-tier-eastern-partnership-table-riga-summit-314726>.

⁶² **Kostanyan H.**, The Eastern Partnership after Riga: Review and Reconfirm, *CEPS Commentary*, Brussels, 29 May 2015.

ստանդարտները, որոնք ԵՄ-ը կիրառում է Բելառուսի և Ադրբեջանի հետ հարաբերություններում, ինչն, անկասկած, նվազեցնում է տարածաշրջանում ԵՄ-ի նկատմամբ վստահությունը:

Ինչպես հայտնի է, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը պաշտոնական հրավեր էր ստացել մասնակցելու Ռիգայի գագաթաժողովին, չնայած մարդու իրավունքների պաշտպաններին կալանքի տակ պահելու, խոսքի ազատության և միավորումներ ստեղծելու իրավունքի սահմանափակումների և քաղաքացիական հասարակության զարգացման համար օրեցօր վատթարացող պայմանների ձևավորմանը: Ադրբեջանի նախագահը չմասնակցեց գագաթաժողովին՝ ակնհայտորեն ի նշան բողոքի ընդդեմ Ադրբեջանում մարդու իրավունքների ոլորտի վերաբերյալ Եվրոպայի բողոքների: Ի տարբերություն Ալիևի, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն պաշտոնական հրավեր չստացավ՝ չնայած մասնակցություն ունենալու նրա ակնհայտ ցանկությանը՝ կապված Բելառուսում քաղբանտարկյալների գոյության հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բելառուսը, փաստորեն, մարդու իրավունքների ոլորտում ավելի լավ արդյունքներ է գրանցում, քան Ադրբեջանը, այդ իրադարձությունը ցույց տվեց, որ ԵՄ-ի հարաբերությունները իր արևելյան գործընկերների հետ հիմնված է երկակի ստանդարտների և անհետևողականության վրա: Երբ խոսքը վերաբերում է ԵՄ-ի ռազմավարական շահերին, Միությունը տնտեսական հարաբերությունների հաստատումն ավելի է կարևորում, քան մարդու իրավունքները:

Ամփոփելով Ռիգայի գագաթաժողովի արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ չնայած նոր հնչեղ նախաձեռնությունների կամ հայտարարությունների բացակայությանը, Ռիգայի գագաթաժողովը հաջող ընթացք ունեցավ այն իմաստով, որ ԵՄ-ը կարողացավ գործընկերությանը հաղորդել ճիշտ ընթացք: Այդուհանդերձ, զարմանալի չէ, որ Ռիգայի գագաթաժողովը չէր նախատեսում ԵԳՔ-ի հիմնարար վերաձևակերպում: Հաշվի առնելով գործընկերների առանձնահատկությունները՝ գագաթաժողովն ապահովեց երկար սպասված տարբերակումը՝ Ասոցացման համաձայնագրերի միջոցով, և ավելի ճկուն, հատուկ հարաբերություններ՝ ոչ ասոցացված գործընկերների հետ: Վրաստանի հետ ընդլայնված հարաբերություն-

ներն Ասոցացման և ԽՀԱԱԳ համաձայնագրերի կնքման ճանապարհով արձանագրվեցին որպես գլխավոր առաջնահերթություն: Հայաստանի հետ ձեռք բերվեց փոխհամաձայնություն ասպագա հարաբերությունների ձևաչափի վերաբերյալ, որը տարվա վերջին հանգեցրեց նոր իրավական շրջանակներով համաձայնագրի վերաբերյալ բանակցությունների պաշտոնական մեկնարկին: Սկսվեցին բանակցություններ նաև Ադրբեյջանի հետ՝ ԵՄ-ի հետ համագործակցության համաձայնագրերը նորացնելու վերաբերյալ: Այդուհանդերձ, ԵՄ-ի համար ակնհայտորեն ավելի կարևոր է Արևելյան հարևանության աշխարհաքաղաքական իրավիճակին (Ռուսաստանի հետ հարաբերություններ, Արևելյան Ուկրաինայում ծավալվող հակամարտություն և Ղրիմի խնդիր) արձագանքումը, քան ԱլԳ-ի արդիականացումը: Արդյունքում, Ռիգայի գագաթաժողովի օրակարգը սահմանափակվեց մի շարք ոչ վիճահարույց հարցերով, որոնք էլ ավելի չէին սրում Ռուսաստանի հետ առանց այդ էլ լարված հարաբերությունները: Վրաստանն ակնհայտորեն հիասթափված էր Ռիգայի գագաթաժողովի արդյունքներից, քանզի այն չանդրադարձավ հավանական անդամակցությանը ԵՄ-ին:

Եզրակացություն

ԵՄ-Հարավային Կովկաս հարաբերությունների զարգացումը կարելի է բաժանել երեք փուլի.

- Առաջին փուլը՝ 1990-ականներ, երկկողմ հարաբերությունների և համագործակցության հաստատման ժամանակաշրջան էր: Այն կարող է բնորոշվել ԵՄ-ի անտարբեր և միասնական դիրքորոշմամբ, քանզի տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրությունը սահմանափակվում էր ՏԱՄԻՄ ծրագրով:

- 21-րդ դարի սկիզբն ազդարարեց ԵՄ-ի տարածաշրջանային քաղաքականության երկրորդ փուլը, որին բնորոշ էր Միության՝ իր ռազմավարական շահերի վերանայումը, ավելի ակտիվ ներգրավվածության պատրաստակամությունը, Հարավային Կովկասի նկատմամբ համապարփակ ռազմավարության մշակումը, նաև՝ ԵՀԲ-ի և ԱլԳ-ի միջոցով ԵՄ-ի տարածաշրջանային քաղաքականության ինստիտուցիոնալացումը: Այդուհանդերձ, ԵՄ-ի դերակատարության ինտենսիվությունը և Հարավային Կովկասում իրականացվող քաղաքակա-

նության արդյունավետությունը շարունակում էին մնալ մակերեսային: Դրան նպաստող գործոններից էին ներքին տարածաշրջանային խնդիրների անտեսումը, ԵՄ-ի օրակարգի առաջնայնությունը, անդամ պետությունների տարավեկտոր քաղաքականությունը: Վերջիններս իրենց սեփական հետաքրքրությունների պատճառով պատրաստ չէին հատկացնել (հատկապես՝ ճգնաժամի պայմաններում) քաղաքական, ֆինանսական կամ անվտանգության բավարար ռեսուրսներ՝ տարածաշրջանում հռչակված նպատակներին հասնելու համար: Անկասկած, հարկ է հաշվի առնել նաև Ռուսաստանի դերակատարությունը, որը տիրապետում է մի շարք լծակների՝ ուղղված տարածաշրջանում ԵՄ քաղաքականության արդյունավետության սահմանափակմանը: Այդուհանդերձ, Հարավային Կովկասում ԵՄ քաղաքականության ձախողման գլխավոր պատճառներից են հարավկովկասյան պետությունների տարբեր առաջնահերթությունները և ընդհանուր տարածաշրջանային նպատակների բացակայությունը: Չնայած ԵՄ-ի նկատմամբ Հարավային Կովկասի պետությունների տարբեր հետաքրքրություններին, կազմակերպությունը չէր մշակել այնպիսի քաղաքականություն, որն արդյունավետորեն տարբերակեր գործընկերների հետ համագործակցությունն՝ ինչպես ըստ ընկալումների և դիրքորոշումների, այնպես էլ ըստ հավակնությունների և ԵՄ-ի հետ համագործակցելու պատրաստակամության: Միաժամանակ, հարավկովկասյան պետությունների և ԵՄ-ի շահերի ու առաջնահերթությունների ակնհայտ անհամապատասխանությունը ևս խոչընդոտում է ԵՄ քաղաքականության արդյունավետությանը: Վիլնյուսի գագաթաժողովում ընդգծվեցին ԱլԳ-ի գործող ձևաչափի բոլոր թերություններն ու սահմանափակումները: Պարզ դարձավ, որ ԵՄ-ը նոր ռազմավարության կարիք ունի, նոր գործիքների և մեխանիզմների, որոնք կապահովեն անհրաժեշտ տարբերակում գործընկերների միջև՝ ըստ վերջիններիս շահերի, հավակնությունների և ԵՄ-ի հետ համագործակցելու պատրաստակամության, դուրս կգան եվրակենտրոն շահերի և ժողովրդավարության ու օրենքի գերակայության տեխնոկրատական խթանման շրջանակներից և թույլ կտան ԵՄ-ին արձագանքել արևելյան հարևանության բարդ աշխարհաքաղաքական իրավիճակին:

• Ռիզայի գազաթաժողովն ազդարարեց հարաբերությունների երրորդ փուլի սկիզբը: ԵՄ-ը հանդես եկավ ասոցացված և ոչ ասոցացված պետությունների միջև տարբերակման (երկմակարդակ մոտեցում) պաշտոնական հայտարարությամբ՝ որպես Վիլնյուսի գազաթաժողովից հետո հարաբերությունների զարգացման տրամաբանական քայլ և ապահովեց ավելի ճկուն երկկողմ հարաբերություններ: Այդուհանդերձ, ավելի մեծ տարբերակումը, հստակությունը և հետևողականությունն անհրաժեշտ են ԵՄ-ի և ոչ ասոցացված պետությունների միջև հարաբերությունների շրջանակում՝ ձևավորելու ԵՄ-ի ավելի արդյունավետ աշխարհառազմավարական ինքնություն և խթանելու ավելի արդյունավետ հարաբերությունների հաստատում իր արևելյան հարևանների հետ:

EU Policy in the South Caucasus Region: A Thorny Path to Differentiation?

NORA GEVORGYAN

Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Armenia

The article analyses the evolution of EU policy in the South Caucasus. Discussing the EU's neighbourhood programmes and assessing the evolution of the interplay between the European Union and the South Caucasus, the article investigates to what extent the EU's neighbourhood policy responds to the South Caucasian states' diverse EU-related attitudes, interests and ambitions. It provides possible explanations of underachievement of the EU's neighbourhood programmes in the South Caucasus region. The study further shows the significance of the diversification approach in boosting the effectiveness of the EU's eastward policy. The article also provides an accurate chronology of EU policy development in the South Caucasus.